

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ մեղքերուդ համար թողութիւն կ'ուզես, հրաւիրէ որբերը, այրիները, վշտահարները, տառապածները, դժբախտները, անդամալոյծները, կոյրերը, կաղերը, կարիքաւորները, բանտարկեալները, բոլոր անօթիները եւ անմխիթարները: Մխիթարէ՛, սփոփէ՛ եւ կերակրէ՛ զանոնք: Միայն անո՛նց ծառայէ, անոնց շո՛ւրջ դարձիր, ուրախացո՛ւր եւ պատուէ՛ զանոնք քաղցր խօսելով, որպէսզի մեղքերուդ թողութիւն եւ տանդ փրկութիւն ստանաս: Այսպէս կազմակերպէ՛ քու ընդունելութեանդ հրաւերները եւ աղփատներուն ու թշուառներուն հրաւերին մէջ հարուստները եւ բարձր դասակարգը նկատի մի՛ ունենար, որպէսզի անոնք, (աղփատները) նախագահեն ու անոնք ըլլան առաջիները: Անոնք թող նստին սեղանին վերը եւ վարը: Միայն զանոնք ներս հրաւիրէ աղաչանքով եւ նամբո՛ւ դիր աղերսանքով: Եթէ այսպէս հիւրընկալես, ոչ թէ տուած՝ այլ առած կ'ըլլաս, ոչ թէ ծախած՝ այլ մեծ շահ մը ապահոված ու նաեւ թողութիւն ստացած կ'ըլլաս: Ասոր համար էր, որ Քրիստոս կ'ըսէ. «Երբ հրաւեր կու տաս, հարուստները մի՛ կանչեր» որպէսզի անոնց տրուած ուշադրութեան պատճառաւ աղփատները արհամարհուած չզգան եւ դուն, քու կողմնակալութեանդ պատճառաւ չդատապարտուիս որպէս օրինագանց մը նման անոր, որ կ'ըսէ. «Ան, որ գեղեցիկ հագուստներ հագած է, պէտք է անոր ըսէ՛. պատիւ ըրէ՛, այստեղ նստէ՛» իսկ աղփատներուն պիտի ըսէ՛. «Գնա՛ եւ սանդխամատին ծայրը նստէ՛» ու այդպէս ընելով չար մտածումներու դատաւոր պիտի դառնաք, որովհետեւ հարուստները ընդունելով մեղք կը գործէ՛ք եւ դուք իբրեւ օրինագանցներ կը մեղադրուիք օրէնքով:

Յովհան Մանդակունի՝ Հառեր

ԾՆԾՂԱՅ



Եկեղեցական երաժշտութեան կշռոյթ տուող եւ միանգամայն տօնական օրերու դողանշը եղող պղնձեայ ձայնային գործիք մըն է ծնծղան:

Վաղ ժամանակներէն եկող, տափակ ու կլոր, նման է սկաւառակի, մէջտեղը՝ գոգաւոր, ուրկէ ամրացուած կաշիէ օղակ մը, որպէս բռնիչ ծառայելով: Երբ իրար կը բախենք, գօրեղ գիլ ձայն մը կը դղրդացնէ եկեղեցին, որպէս հաւատքի պոռթկում կը խանդավառէ հաւատացեալները, անոնց սրտերն ու հոգիները լեցնելով տօնական ցնծութեամբ:

Ծնծղայի գործածութիւնը առկայ է նաեւ աշխարհիկ նուագարաններուն մէջ, որ մերթ րնդ մերթ տիրապետող իր գնգոցով կը միջամտէ երաժշտական ներկայացումներուն, իր գօրեղ ձայնով ներգրաւելով երաժշտաւէր հասարակութեան ուշքն ու ներաշխարհը:

Ծնծղայի գործածութիւնը փորձառութիւն կը պահանջէ, նախ կշռոյթը պահելու, նիշտ պահուն գնգացնելու եւ խանդ ու եռանդ տալու համար երգին թէ երաժշտութեան:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 20 ՄԱՐՏ 2022

ԹԻՒ 12

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես.56.1-57.21: Եփ. 4.17-5.14: Ղկ.16.1-31

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԷՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 16.1-31

Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց. «Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վերակացու տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին ըսելով, թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. «Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնած բոլոր ստացուածքներու հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»: Տնտեսը ինքնիքն խորհեցաւ. «Ի՞նչ կրնամ ընել: Սիւս տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը գրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն զիտեմ, թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ զիս ընդունին իրենց տուներէն ներս»: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. «Որքա՞ն պարտք ունիս տիրոջս»: Ան պատասխանեց. «Երկու հարիւր թիթեղ ձէթ»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամորհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր»: Յետոյ հարցուց միւսին. «Դ՛ու՞ն որքան պարտք ունիս»: Ան պատասխանեց. «Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամորհակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն»: Տէրը ասիկա լսելով գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ աւելի ճարպիկ են քան՝ լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի. «Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէ՛ք այնպէս, որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին»:

ՊԱՇՏՈՂՈՒԹԻՒՆ

Պահեցողութեան առաքիւնութիւնը մեծապէս կարեւոր է մեր բնութեան համար եւ բազմաթիւ թերութիւններ խոնարհ պահեցողութեամբ կը սրբագրուին: Այդ իսկ պատճառով, երբ Աստուած մարդը ստեղծեց, անոր բնութիւնը խիստ պահեցողութեամբ օժտեց, եւ առաջին մարդուն որպէս առաջին պատուիրան խիստ պահեցողութիւնը պարտադրեց, որ է՝ արգիլուած ծառէն չճաշակել: Եթէ առաջին մարդը պահած ըլլար պահեցողութեան պատուիրանը, առաքիւնի, անմահ եւ անմեղ կեանք մը պիտի ժառանգէր եւ երկինքի մէջ ամեն տեսակի բարութիւններ պիտի վայելէր: Բոլոր անոնք, որ պահեցին խիստ պահեցողութիւնը, բազմաթիւ վիշտերէ փրկուեցան: (Յովհան Մանդակունի)

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### Ս. ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Յովհան Օձնեցի հայ եկեղեցւոյ փառքերէն մէկն է: Ան կաթողիկոսական աթոռ կը բարձրանայ (717-728) յաջորդելով Եղիա Արմիշեցի կաթողիկոսին:

Ս. Յովհան Տաշիրք գաւառի Օձուն գիւղէն է եւ աշակերտը՝ Թեոդորոս Քոթենաւորին, որ իր ժամանակի ամէնէն նշանաւոր աստուածաբաններէն եղած է: Կ'ենթադրուի, թէ ան հելլենական ուսումնարանի մը մէջ կրթուած էր: Իբրեւ իմաստուն հովուապետ, իր կաթողիկոսութեան տարիներուն ընթացքին հեռու կը մնայ յունասեր միտումներէ, թէ՛ վարդապետական մարզին մէջ եւ թէ՛ քաղաքական ուղղութեան վրայ: Ան իր շնորհները լաւագոյնս կ'օգտագործէ իր պաշտօնին բովանդակ տեւողութեան ընթացքին եւ երկրին քաղաքական պատեհութենէն օգտուելով՝ ազգային եկեղեցւոյ կազմակերպութիւնը հաստատուն հիմքերու վրայ կը դնէ: Իր այդ քաղաքականութեան առաջին պտուղը կ'ըլլայ Էօմէր ամիրապետէն խնդրել, որ քրիստոնեաները չբռնադատուին իրենց հաւատքը փոխելու, եկեղեցիներէն հարկ չպահանջուի եւ քրիստոնէական պաշտամունքը ամէն տեղ ազատօրէն կատարուի:

Իր հայրապետութեան երկրորդ տարին, Դուրնի մէջ կը գումարէ եկեղեցական ժողով մը, որուն ներկայ կը գտնուին աւելի քան 30 եպիսկոպոսներ:

Ժողովի ընթացքին կը խօսի իր նշանաւոր ատենաբանութիւնը, որ կը սկսի «Համբերողացն նախատիպ մեծն Յովք» բառերով:

Այս ժողովին կը սահմանուին երեսունեօթը կանոններ: Բացի այս կանոններէն, Օձնեցի Հայրապետ եկեղեցական կանոններ կը հաւաքէ եւ կը կազմէ առաջին հայ կանոնագիրքը, որ ժամանակի ընթացքին հետզհետէ կը կատարելագործուի: Ս. Յովհան Օձնեցի կը յատկանշուի աղանդաւորներու դէմ իր մղած պայքարով եւ այս տեսակետով յաւելտ պիտի մնան իր «Ընդդէմ երեսութեան» եւ «Ընդդէմ Պաղիկեանց» գրութիւնները: Ան նաեւ ժամագիրքի կարգաւորիչներէն մէկը եղած է, գրելով «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գիրքը, «Աւագ Ուրբաթ»ի շարականները, «Մեղաք յամենայնի»ն եւ ուրիշ գործեր:

Ս. Յովհան Օձնեցի իր կեանքի վերջին հանգրուանին Սոթեր լեռան վրայ իր կատուցած եկեղեցւոյ մէջ ճգնական կեանքի կը նուիրուի «պահօք, աղօթիւք եւ տփնութեամբ» եւ «խաչաչար ճգնութեամբ», իրեն ընկերակից ունենալով Գեորգ Սփանջեղագործ եւ Մատթէոս Խոտաճարակ վարդապետները:

Ս. Յովհան Օձնեցի Հայրապետ կը վախճանի 728-ին: Անոր բարձր իմաստութեան եւ սրբութեան համբաւը միշտ վառ կը մնայ յաջորդ սերունդներու սրտին մէջ:

**ԱՌԱԿ 11**

Արդարը կը պրծի որսորդներուն ձեռքէն, մինչ անոր փոխարէն ամբարիշտն է, որ կը մատնուի անոնց ձեռքը:

Անօրէններուն խօսքը որոգայթ է իրենց ընկերներուն, իսկ արդարներուն գիտութիւնը՝ յաջողութեան երաշխիք:

## Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

### ՅԻՍՈՒՄ ԳՏՆԵԼ ՈՒԶՈՂԸ՝ ՊԻՏԻ ՎԱՅԵԼԷ ԿԱՏՈՒԾՈՅ ԿՈՎՋՆՈՐՊՈՒԹԻՒՆԸ

«Կրկին տեսան այն աստղը, որ արեւելքի մէջ տեսեր էին եւ ահա աստղը առաջնորդեց զիրենք մինչեւ, որ եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ, ուր երեխան կը գտնուէր» (Մտ. 2.9-10): Աստղին առաջին երեւումը տեղի ունեցած էր արեւելքի մէջ (հաւանաբար Պարսկաստան, Եթովպիա, կամ Հայաստան), իսկ աստղին այս երկրորդ երեւումը՝ Բեթլեհէմի մէջ: Աստղին առաջին երեւումը մոզերուն նորածիլ հաւատքին հետեւանքն էր, իսկ աստղին երկրորդ երեւումը՝ իրենց հաստատուն հաւատքին հետեւանքը: Անոնք վայելեցին Աստուծոյ մնայուն առաջնորդութիւնը, որովհետեւ աննահանջ հաւատքով փնտռեցին նորածին մանուկ Յիսուսը:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Անոնք որոնք հաւատքով կը փնտռեն Քրիստոսի ներկայութիւնը իրենց կեանքերուն մէջ՝ Քրիստոս իր խօսքով եւ իր Հոգիով պիտի առաջնորդէ զիրենք մինչեւ հոն, ուր ինքն է, որպէսզի տեսնեն իր փառքը (Յհ. 17.24): Աստուած երբեք թոյլ պիտի չտայ, որ հաւատքով զինք փնտռողները անորոշութեան մշուշին մէջ խաբխափեն:

## ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

### ԵՅԷ ՔՈՒ ԳԱՏԻՂ ԵՒ ԻՐԱՐՈՒՆՔԻՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՏՈՒԾՈՅ ԳԱՏԱՏԱՆԻՆ ԿԸ ՎԱՏԱԿԻՍ, Կարդա՛ր՝ ՍԿՂՄՈՍ 58

Արդար վճիռ կ'արձակէ՞ք, ո՛վ իշխողներ, ուղիղ դատաստան կ'ընէ՞ք մարդոց: Ո՛չ: Ձեր սրտին մէջ կը խորհիք, թէ ինչ անիրաւութիւն կրնաք ընել աշխարհի վրայ, թէ ի՞նչ բռնութիւն կրնայ գործել ձեր ձեռքերը: Ամբարիշտները իրենց ծնունդէն իսկ խտտորած են, ծնելէ իսկ առաջ մոլորած են ու ստախօս: Անոնց թոյնը օձի թոյնի պէս է, եւ իրենց ականջը փակած են՝ խուլ օձի պէս, որ չի լսեր թովիչներուն նուագը, ի՛նչքան ալ վարպետ ըլլայ թովիչը: Ո՛վ Աստուած, փշրէ՛ անոնց ակռաները իրենց բերնին մէջ, կոտորէ՛ առիծի կորիւններուն ժանիքները, Տէ՛ր: Թող շոգիանան ջուրերու պէս, որոնք կը հոսին, կոտորէ՛ անոնց նետերը եւ ճգմէ՛ զանոնք: Թող խիսունջի պէս՝ հալին իրենց քալած ատեն, վիժած ծնունդի մը պէս՝ թող արեւ չտեսնեն: Նախքան փուշերուն կաթսային տակ այրիլը, դալար թէ չոր տարտղնէ՛ զանոնք:

Արդարը պիտի ուրախանայ, երբ Աստուծոյ վրէժխնդրութիւնը տեսնէ, իր ոտքերը պիտի լուայ ամբարիշտներու արիւնին մէջ, եւ ամէն մարդ պիտի ըսէ.- «Արդարեւ արդարը իր վարձատրութիւնը ունի: Արդարեւ Աստուած մը կայ, որ կը դատէ աշխարհը»:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԵՆ**